# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamayng@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 17

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳԵՂԱՐԴԻ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 2/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳԵՂԱՄ ԱՐՇԱԿԻ ԱՐՇՅԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10.11.15 կետերի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գեղամ Արշակի Արշյակյանին սեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գեղարդի խճուղի թիվ 2/4 հասցեի հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ***որոշում եմ***՝

1. Գեղամ Արշակի Արշյակյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասի վրա 2017թ. ինքնակամ կառուցված հասարակական նշանակության շինությունները՝ առևտրի սրահ ճանաչել օրինական համայնքապետարանի համապատասխան հաշվին՝

(22.56+4.89 )քմ*20000*0.11=60390 ՀՀ դրամ մուծելուց հետո

2.Որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. հունվարի 29

գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4 garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 18

### ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ Գ.ԳԱՌՆԻ ԳԵՂԱՐԴԻ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 2/5 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188- հոդվածով, 'Տեղական Ինքնակառավարման Մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին 2006թ. մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, ***որոշում եմ՝***

1.Գառնի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության 07-021-0069- ծածկագրից 0.0175 հա բնակավայրերի այլ հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման:

2.Գառնի գյուղի Գեղարդի Խճուղի թիվ 2/5 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող 0.0175հա. մակերեսով հասարակական կառուցապատման (ծածկագիր 07-021-0069-) հողամասում Գեղամ Արշակի Արշակյանի կողմից ինքնակամ կառուցված 139.02 քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության շինությունը ճանաչել օրինական և այն համարել Գառնի համայնքի սեփականություն.

2.Ընդունել ի գիտություն, որ՝

1/Շինությունը պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2/ Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության, շինության պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ գ. Գառնի, Գեղարդի Խճուղի թիվ 2/5:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Ա. Սահակյան**

2021թ. հունվարի 29

գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 19

## ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳԵՂԱՐԴԻ ԽՃՈՒՂԻ N 74/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳԱԳԻԿ ԼԵՎՈՆԻ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10.11.22 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գագիկ Լևոնի Միրզոյանին սեփականության իրավունքով պատկանող, Կատայքի մարզի Գառնի համայնքի Գեղարդի խճուղի N 74/1 հասցեում տնամերձ հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ***որոշում եմ՝***

1. Գագիկ Լևոնի Միրզոյանին սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա 2019 թվականին ինքնակամ կառուցված 285,32քմ. բնակելի նշանակության շինությունները, 211,66քմ օժանդակ շինությունը և 23,87քմ. պարիսպը ճանաչել օրինական:
2. 2019թվականին կառուցված արտաքին մակերեսներեվ 285,32 քմ, բնակելի նշանակության շինությունները, 211,66 քմ օժանդակ շինությունը և 23,87քմ. պարիսպը ճանաչել օրինական համայնքապետարնի համապատասխան հաշվին :
3. 285,32*10000*0.11= 313852 դրամ

(211,66+23,87)*6000*0.11 = 155450 դրամ

Ընդամենը 469302 դրամ մուծելուց հետո

Որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. հունվարի 29
գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

<<02>> ՓԵՏՐՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 20

## ԱՁ ԳԵՂԱՆՈՒՇ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և հիմք ընդունելով ԱՁ Գեղանուշ Խաչատրյանի հայտը անդորագիր N 4 ***որոշում եմ***՝

1. Կոտայքի մարզի Գառնի համայնքի Ջ. Ալեքյան փողոց թիվ 11 հասցեում գործող ԱՁ Գեղանուշ Խաչատրյանին տալ թույլտվություն 2021 թվականի հունվարի 1-ից մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը տեխնիկական հեղուկների վաճառքի վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 2-ի

գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamayng@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

<<02>> ՓԵՏՐՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 21

### <<ՀԱՐՄՈՆԻԱ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով <<ՀԱՐՄՈՆԻԱ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ին հայտը անդորագիր N 5 ***որոշում եմ***՝

1. Կոտայքի մարզի Գառնի համայնքի Ջ.Ալեքյան փողոց թիվ 29 հասցեում գործող <<ՀԱՐՄՈՆԻԱ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ին տալ թույլտվություն 2021 թվականի հունվարի 01-ից մինչև հունիսի 31-ը ոգելից և ալկոհոլային խմիչքների, վաճառքի վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 2-ի

գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

<<03>> ՓԵՏՐՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 22

## ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 33 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն << Նորմատիվ Իրավական Ակտերի մասին >> օրենքի 37 հոդվածի 1-ին մասի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի, 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, հաշվի առնելով համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպումը, *որոշում եմ՝*

1.Ուժը կորցրած ճանչել Գառնի համայնքի ղեկավարի 2020թվականի փետրվարի 18-ի <<Գառնի համայնքի աղետների ռիսկի կառավարման համակարգ ստեղծելու մասին >> N 33 որոշումը

2. Հաստատել Գառնի համայնքի՝

1) աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2)աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 3-ի

Գ.Գառնի

Հավելված N 1
Գառնի համայնքի ղեկավարի
«03» փետրվարի 2021թ-ի N 22 որոշման

# ԿԱԶՄ

## ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Ա.Սահակյան /համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Վ.Մարտիրոսյան /համայնքի ղեկավարի տեղակալ/,
3. խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Լիպարիտ Թադևոսյան /աշխատակազմի քարտուղար/,
4. խորհրդի անդամներ՝
   1) ավագանի Սարո Աբելյան
   2) ավագանի Գոռ Վարդանյան ,
   3) ոլորտային պատասխանատուներ՝
   ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Ջիվան Մխիթարյան /Կոտայքի մարզային հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար՝համաձայնեցված է
   բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Գարիկ Հարությունյան ՀՀ Ոստիկանության Աբովյանի բաժնի Գեղարդիրի բաժանմունքի պետ :
   գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Տիգրան Պողոսյան գլխավոր մասնագետ :
   դ. կապի պատասխանատու՝ Մարատ Պետրոսյան առաջին կարգի մասնագետ :
   ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Քրիստինե Սարգսյան /«Գառնի Առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն/(համաձայնեցված է ) ,
   զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Սրբուհի Հարությունյան /համայնքապետարանի առաջատար մասնագետ :
   է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Գեղամ Փանոսյան հայ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Գեղամա մասնաճյուղի Գառնիի տարածքային պետ:
   ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Գևորգ Մարտիրոսյան /համայնքապետարանի առաջատար մասնագետ :
   թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Ռուբիկ Սարիբեկյան համայնքի ղեկավարի խորհրդական :
   ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Լիանուշ Պետրոսյան օպերատոր:

Հավելված N 2

Գառնի համայնքի ղեկավարի

«03» փետրվարի 2021թ-ի N 22 որոշման

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Գառնի համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Գառնի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

1. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացնումը` բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) վարժանքների կազմակերպումը և անցկացնումը

14) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

2. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են`

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,

8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

10) առաջին օգնության իրականացման ապահովումը,

11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,

16) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,

17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,

18) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,

19) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,

20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<<03>> ՓԵՏՐՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 23

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ

Համաձայն <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով ***որոշում եմ***՝

Գառնի համայնքում Սեդրակ, Լալա, Համլետ և Հայետ Սարգսյաններին համասեփականություն համարվող տնամերձ հողամասին ծածկագիր 07-021-0039-0001 և նրա վրա կառուցված շինությանը տրամադրել հասցե համաձայն բաժանման սխեմայի ։

S 1= 0.082938 հա մասին գ.Գառնի Ջ. Ալեքյան փողոց տուն 14

S 2= 0.082994 հա մասին գ.Գառնի Ջ. Ալեքյան փողոց տուն 14/1

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. փետրվարի 3-ի

գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<<08>> ՓԵՏՐՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 24

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ
ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿՊԿ նախագահի 01.06.2010թվականի թիվ 186-Ն հրամանով հաստատված կարգը ***որոշում եմ***

1. Գառնի վարչական տարածքում սխալմամբ ֆիզիկական անձի սեփականություն ճանաչված 07-021-0390- ծածկագրի 0.008845 հա վարելահողը ինչը չի պատկանում որևէ ֆիզիկական անձի փոխադրել որպես համայնքային սեփականություն:
2. Դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում հողամասը գրանցելու որպես համայնքային սեփականություն համաձայն որոկավորում ունեցող չափագրողի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. փետրվարի 8-ի

գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

<<08>> ՓԵՏՐՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 25

### ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 34 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 37 հոդվածի 1-ին մասի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերի հաշվի առնելով Գառնի համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման կարևորությունը, ***որոշում եմ***՝

1.Ուժը կորցրած ճանաչել Գառնի համայնքի ղեկավարի 2020թվականի փետրվարի 18-ի <<Գառնի համայնքի աղետների ռիսկի կատարման պլանը հաստատելու վերաբերյալ>> N 34 որոշումը :

2.Հաստատել <<Գառնի համայնքի 2021 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը>>՝ համաձայն 1-ից 6-րդ հավելվածների:

3.Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. փետրվարի 8-ի

գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamayng@mail.ru

### ՈՐՈՇՈՒՄ

<<08>> ՓԵՏՐՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 26

### ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հաշվի առնելով անապահով քաղաքացիների դիմումները ***որոշում եմ՝***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի մի խումբ սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն համաձայն հավելվածի :

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. փետրվարի 8-ի

գ.Գառնի

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի
N 26 ՈՐՈՇՄԱՆ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Մարկոսյան | Մարինե | 35000 դրամ |
| 2. | Գրիգորյան | Աշոտ | 25000 դրամ |
| 3. | Արշակյան | Արսեն | 30000 դրամ |
| 4. | Պետրոսյան | Սվետլանա | 40000 դրամ |
| 5. | Պետրոսյան | Բաբկեն | 90000 դրամ |
| 6. | Սահակյան | Աննա | 35000 դրամ |
| 7. | Սիմոնյան | Մխիթար | 15000 դրամ |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«10» ՓԵՏՐՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 27

### ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾԱԾՐԱՐԺԵՔ (4-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏԱՎԱՅՐ ) ՀՈՂԱՏԵՍՔԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ (ՋՐՈՎԻ ՎԱՐԵԼԱՀՈՂ 4-ՐԴ ԿԱՐԳԻ) ՀՈՂԱՏԵՍՔԵՐՈՎ ՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 2-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 17 սեպտեմբերի 2009թ. գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին N 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7,8 և 9 կետերով և հաշվի առնելով ,որ արոտավայրում կատարվել է բարելավում և այժմ դարձել է լիարժեք ջրովի վարելահող ***որոշում եմ՝***

1. Գառնիի համայնքում սեփականության իրավունքով պատկանող սեփականաշնորհված գյուղատնտեսական նշանակության 0,2 հա (ծածկագիր 07-021-0316-) ցածրարժեք գյուղատնտեսական նշանակության արոտավայրը փոխել բարձրարժեք ջրովի վարելահող հողատեսքով :
2. Որոշման մեկ օրինակը սահմանված ժամկետում ուղարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սահակյան**

2021թ. փետրվարի 10-ի

գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«10» ՓԵՏՐՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 28

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 6-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 13 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓՈՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության 2002թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետի դրույթներով, հաշվի առնելով, որ օրինական հատկացված տնամերձ հողամասին կից ինքնակամ զբաղեցրած հողամասը և օրինական հատկացված հողամասը մինչև 2001թ-ի մայիսի 15-ը ունեցել է նույն սահմանագիծը և փաստացի օգտագործել և մինչ օրս օգտագործվում է սեփականատերերի կողմից, քարտեզագրվել և նույն սահմանագծով ճանաչվել է որպես մեկ միավոր ինչը երևում է համայնքի հողակադաստրային քարտեզում և այն որ օրինական և նշված ինքնակամ զբաղեցրած հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի շարքում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ՝***

1. Ենոք, Լիլիթ, Լուսինե, Թամարա Ասատրյանների և Սոնա Ավդալյանի կողմից փաստացի օգտագործվող՝ 07-021-0096-0023 ծածկագրում, 0.51093 հա հողամասի սեփականության իրավունքը ճանաչել ամբողջությամբ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սահակյան**

2021թ. փետրվարի 10-ի

գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«10» ՓԵՏՐՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 29

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 6-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 13 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10.11.22 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ենոք, Լիլիթ, Լուսինե, Թամարա Ասատրյանների և Սոնա Ավդալյանի համասեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2-րդ թաղամաս 6-րդ փողոց թիվ 13 հասցեում տնամերձ հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ***որոշում եմ՝***

1. Ենոք, Լիլիթ, Լուսինե, Թամարա Ասատրյանների և Սոնա Ավդալյանի համասեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա 1988 և 1995 թվականների կառուցված բնակելի նշանակության շինությունները համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ որոշման առաջին կետով նշված ինքնակամ շինությունները կառուցվել են 2001թ-ի մայիսի 15-ից առաջ շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. փետրվարի 10-ի

գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamayng@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«11» ՓԵՏՐՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 30

## ԱՁ ԱՐԱ ԱԲԵԼՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով ԱՁ Արա Աբելյանի հայտը անդորրագիր N 12 ***որոշում եմ՝***

1.Կոտայքի մարզի Գառնի համայնքի Երևանյան փողոց թիվ 21 հասցեում գործող ԱՁ Արա Աբելյանին տալ թույլտվություն 2021 թվականի հունվարի 01-ից մինչև դեկտեմբերի 31-ը ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 11-ի

գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«11» ՓԵՏՐՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 31

ԱՁ ՎԻՐԱՊ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով ԱՁ Վիրապ Բաղդասարյանի հայտը անդորրագիր N 13 ***որոշում եմ***՝

1.Կոտայքի մարզի Գառնի համայնքի Ս.Շահումյան փողոց թիվ 36 հասցեում գործող ԱՁ Վիրապ Բաղդասարյանին տալ թույլտվություն 2021 թվականի հունվարի 01-ից մինչև դեկտեմբերի 31-ը ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 11-ի

գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«11» ՓԵՏՐՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 32

ԱՁ ՄԱՐԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով ԱՁ Մարինե Բաղդասարյանի հայտը անդորրագիր N 7 ***որոշում եմ՝***

1.Կոտայքի մարզի Գառնի համայնքի Ջ.Ալեքյան փողոց թիվ 5/1 հասցեում գործող ԱՁ Մարինե Բաղդասարյանին տալ թույլտվություն 2021 թվականի հունվարի 01-ից մինչև դեկտեմբերի 31-ը ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 11-ի

գ.Գառնի